

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 153

Մէկ ուրիշ առարկութիւն նախասահմանութեան վարդապետութեան դէմ այն է որ Հռովմայեցի 9ում Պօղոսը վկայակոչում է Մաղաքիա 1:2-3ը՝ ակնարկելով ազգերին, ուրեմն քննադատողները ասում են որ Պօղոսը չի խօսում անհատական ընտրութեան իսկ խմբական ընտրութեան առթիւ, ուր Աստուած միայն ընտրում է մի խմբին փրկութեան համար առանցի ընտրելու անհատ մարդկանց: Եթէ մէկը հաւատայ Յիսուսին նա ապա դառնում է այդ խմբի մի անդամ: Ուղիղ է որ Աստուածաշունչը յաճախ գործածում է մարդկանց անուններ ակնարկելով ազգեր ու ցեղեր՝ ինչպէս Իսրայէլ, Իսահակ, Յակոբ, Եսաւ, Յովսէփ, Երովմ եւ այլն (Ուվսէ 14:5, Ամովս 5:6, 7:9, Երեմիա 10:25, 49:7, 10). բայց Հռովմայեցի 9ում նաեւ պարզ է որ Պօղոսը վերագրում է Իսրայէլի ընտրութիւնը Մաղաքիա 1ում անհատներին՝ նրանց փրկութեան ու կորուստի նկատմամբ, քանի որ նա խօսում է նրանց ծնողքի ու ծնունդի մասին, նրանց արարքների (կամ նրանց արարքների պակասութեան) մասին, եւ Աստուծոյ մէկի ու ոչ միւսի ընտրութեան առթիւ:

Նաեւ խմբեր անիմաստ են առանց իրենց անհատական անդամներին, եւ այս Աստուծոյ ընտրութիւնը դարձեալ ենթակայ է դարձնում մարդու որոշման՝ որը բոլորովին հակառակ է այդ ինչ որ Պօղոսն է ուսուցանում (Հռովմայեցի 9:11, 16): Եթէ Պօղոսը ակնարկում էր Աստուծոյ խմբերի ընտրութիւնը, ապա նրա հարցումները անիմաստ կ'լինէին (համարներ 14, 19): Ինչո՞ւ պիտի որեւէ մէկը առարկէր Աստուծոյ մի խմբի ընտրութիւնը եթէ անդամները իրենք որոշում են որ լինել կամ չլինել այդ խմբի մէջ:

Նման այս կէտին կայ մի ուրիշ առարկութիւն թէ Հռովմայեցի 9ը չի խօսում ընտրել փրկութեան համար բայց ծառայութեան կամ ուրիշ երկրային օրհնութիւնների համար: Այսպէս մեկնաբանութիւններ հակառակ են նախասահմանութեան վարդապետութեան ենթահողին եւ պարզ իմաստին ինչպէս բացատրւած է Հռովմայեցի 9ում, որը բխում են Պօղոսի վարդապետական ուսուցումներէրից 1-8րդ գլուխներում՝ կենտրոնանալով Յիսուս Զրիստոսի մէջ եղած անձնական փրկութեան վրայ (Հռովմայեցի 9:30-32):

Մի ուրիշ յայտնի վիճաբանութիւն այն է որ եթէ Աստուած արդէն ընտրել է բոլոր նրանց որ պիտի փրկեն, ապա ի՞նչ է որեւէ մէկի փրկութեան համար եղած մեր աղօթքների կամ աւետարանչութեան նպատակը կամ արժէքը: Նախ, պէտք է մեզ աղօթել մարդկանց համար եւ վկայել նրանց որովհետեւ Սուրբ Գիրքը յստակօրէն պատուիրում է դրանք (Մատթէոս 5:44, Հռովմայեցի 10:1, Ա. Տիմոթէոս 2:1-4, Մատթէոս 28:19-20, Գործք Առաքելոց 1:8, Ա. Պետրոս 2:9): Երկրորդ, Աստուածաշունչը նաեւ յստակօրէն ուսուցանում է որ Աստուած անցեալի յաւիտենականութեան մէջ նախասահմանել է ոմանց յաւիտենական կեանքի համար եւ ուրիշներին յաւիտենական մահուան համար, եւ Աստուծոյ այս նպատակը անփոփոխելի եւ անսխալական է (Ուէստմինստըր Հաւատոյ Հանգանակը - Գլուխ 3, Բաժին 4): Մեր աղօթքները ու աւետարանչութիւնը չեն փոխում Աստուծոյ միտքը կամ ծրագիրը, քանի որ ամեն ինչ որ Աստուած սահմանել է տեղի կ'ունենայ կատարելապէս, եւ ոչ մի բան կ'կարողանայ արգելել Նրա ծրագիրները (Թւոց 23:19, Հռովմայեցի 11:34-36, Եփեսացի 1:11): Սակայն, մեր աղօթքները ու աւետարանչութիւնը փոխում են պարագաները, քանի որ Աստուած գործածում է սրանք որպէս միջոցներ որով Նա իրագործում է Իր ծրագիրները (Առակաց 15:8, Եսայիա 65:24, Ղուկաս 11:9-10, Գործք Առաքելոց 8:29-38, Յակոբոս 5:16-18): Վերակազմ աստուածաբանութիւնը ուսուցանում է որ Աստուած ոչ միայն սահմանել է նպատակները իսկ Նա նաեւ սահմանել է այդ նպատակների հասնելու միջոցները (Գործք Առաքելոց 20:18-21, Հռովմայեցի 10:14-17, Ա. Կորնթացի 1:21, Սաղմոս 119:89-91, Եփեսացի 2:10, Եբրայեցի 13:21):

Ի վերջոյ, ոմանք հարցնում են թէ՛ «Ինչո՞ւ Աստուած բոլորին չի փրկում»: Սուրբ Գիրքը մեզի չի ասում թէ ինչու Աստուած ընտրել է փրկելու ոմանց ու ոչ բոլորին, բայց այն ուսուցանում է թէ Աստուած պարտաւոր չի փրկելու որեւէ մեղաւորին, եւ թէ Նա ազատ է եւ իրաւունքն ունի փրկելու ումին որ Նա կամենում է. եւ երբ Նա փրկում է մէկին այդ պարզապէս եւ միմիայն հիմնւած է Նրա շնորհքից ու ողորմութիւնից:

Մեղաւոր մարդու համար այս մի դժար եւ խոնարհացնող վարդապետութիւն է ընդունել: Ընտրութիւնը եւ դատապարտութիւնը Աստուածաշնչի խորը ճշմարտութիւններ են որոնց մենք չենք կարող լիովին ըմբռնել կամ թափանցել՝ քանի որ Աստուած չի պատասխանել սրանց առթիւ եղած մեր բոլոր հարցումները, նման Յօբին ու նրա հարցումները: Բայց մի բան պարզ է, Աստուած չի հնարաւոր դարձրել փրկութիւնը բոլորի համար բայց թողել դրա իրականացումը մարդկանց ձեռքերի մէջ. իսկ Նա իրական է դարձրել փրկութիւնը բոլոր նրանց համար որոնց Նա ընտրել է (Հռովմայեցի 8:29-30): Կա ուրիշ ոչինչ որ տալիս է մեզ աւելի ցնծութիւն եւ վստահութիւն մեր փրկութեան նկատմամբ քան թէ այս վարդապետութիւնը (Ուէստմինստըր Հաւատոյ Հանգանակը - Գլուխ 3, Բաժին 8):

Թէպէտ մենք չենք կարող բոլորովին հասկանալ նախասահմանութեան վարդապետութիւնը, սակայն մեզի համար որոնք այդ ընդունում ենք Աստուածաշնչի ամենասիրելի, ամենաքաղցր եւ ամենաաքանչելի վարդապետութիւններից մէկն է այս, քանի որ դրա մէջ տեսնում ենք Աստուծոյ նկարագրի շքեղ փառքը, եւ Նրա անսահման սէրն ու շնորհքը հանդէպ մեզ մեղաւորներին: Որպէս հունաւոր արարածներ մենք խոնարհութեամբ ծունկի ենք գալիս մեր անհուն Աստուծոյ եւ Նրա նպատակների առջեւ, մեծ ահի եւ երկրպագութեան զգացումով, մեր փրկութեան համար եղած յաւերժական երախտագիտութեամբ: Փառաբանութիւնը պէտք է լինի բոլոր աստուածաբանութեան վերջնական նպատակը (Հռովմայեցի 11:33-36):